

«Իզմիրի Արշալոյս Արարատեան յարգոյ լրագրին մէջ հետեւեալը կը կարդանք:

«Հաւատարիմ ազբիւրէ մի կիմանամք թէ անցեալները Վահրէի Անգղեյ ընդհանուր հիւպատոսը 40 լիւրայի արժողութեամբ հազուստ և 1000 Սպանիոյ թալէս պատրաստ դրամ յատուկ սուրհանդակով մի յուղարկեր է 'ի Հապէշաստան առ Վեր. Տ. Սահակ արքեպիսկոպոսն: Հագուստը 'Ն. Սրբադնութեան և իւր ընկերացը համար է եղեր. իսկ հաղար թալէսը՝ հարկաւոր եղած երեւելի անձանց ընծայ տալու համար, որպէս զի անոնց օգնութեամբ կարող ըլլան վերագառնալու»:

Մասիս օրաթերթ, Թիւ 358:

«Արշալոյս Արարատեան պատուական լրագրին 857 թուոյն մէջ հետեւեալը կը կարդանք:

«Հնդկաստանէն կը ծանուցանեն մեզ, թէ Ս. Լըուսաղէմայ նուիրակ Արժ. Տ. Ներսէս ծայրագոյն վարդապետը յաջողեր է Կալիթայի տնտեսական վարչութենէն (աւսմիւնիսթրիատ) ստանալու՝ հանգուցեալ Սանուկեան Վեորդին շատ տարիներէ 'ի վեր յանուն Ս. Յակոբայ աթոռոյն կտակաւ թող տրւած հրիտակին տոկոսը, որ 14,900 ռուբլի է եղեր. այսինքն 1490 անդղական լիւրս:

Նոյն, Թիւ 362:

Ը իրակ զաւառի Բայենդուր գիւղէն տիրացու Սելիտոռ ուրարակիր Ս. Արսէնեանցի նամակէն հետեւեալ բովանդակութիւնը կը քաղենք.

Յիշեալ գեղջ ուսումնասէր Սելքիսիդէի քահանայն Սանուկեան, որ Հառիճոյ վանից դպրոցը ուսումն առած ընելով, 1862 թուականին քահանայ ձեռնադրուելէն 'ի վեր իւր անխոնջ ջանքը ու միայն իւր խնա-

մոց յանձնուած հայ մանկուոյն հայերէն ընթերցանութիւն և այլն ուսուցանելու չը խնայեր, այլ և տեսնելով ցաւօք սրտի՝ եկեղեցւոյ շէնքին աւերակ վեճակը, գեղեցիկ եռանդով ոգևորուած, Հոգևոր Եղեանութեան թոյլտվութեամբ և հրամանաւ՝ կը ձեռնարկէ 'ի հիմանէ նոր Եկեղեցւոյ շէնութեան, զոր իւր ժողովրդին և շրջակայ կողմանց Հայկազանց արօք և օգնականութեամբ ևս սեպհական արդեամբք և անձնանուէր աշխատութեամբք յաջողեցաւ յաւարտ ածել. որոյ ս. օծման հանգէսը անցեալ դեկտեմբեր ամսոյ 5-ին 1868 թուականի կատարեցաւ Վ. Ե. Վ. Կաթողիկոսի կողմանէ նշանակված մի եպիսկոպոսի ձեռքով:

Տիրացու նամակագիրը կը յաւելու նաեւ թէ, յիշեալ բարեկրօն քահանայն տակաւին մեծ հոգս կը կրէ եկեղեցւոյ ներքին պիտոյից թերութիւնները լրացնելու. մանաւանդ՝ օր աւուր առաւել մեծ ճիգ կը զոհէ գիւղիս աղքատիկ դպրոցին 'ի զարգացումն և 'ի յառաջադիմութիւն՝ Հայ մանկանց լուսաւորութեան համար:

Յաջորդ թուով 'Ն.Ն. Կախիճեանայ Մարդասիրական Բնկերութեան առ Վ. Ե. հաստատ. Կաթողիկոսն մատուցած հաշիւը կը փութամք հրատարակել:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՅ

(Շարունակութիւն)

Մենք ասացինք, որ դաստիարակութեան նպատակը է մարդուս առնել ուժեղ, խելօք եւ առաքինի: Գոյցէ ասողներ լինին մեզ, որ եթէ դաստիարակութեամբ կարելի է մարդուն այդ զովանի յատկութիւնքը տալ.

(*) Տես նախընթաց համարն.

էլ ինչ ասել է «քնական ծիրք» կամ «ժառանգականապէս անցումն որակութեան ծնողաց առ որդիս»։ Մենք չենք հերքում ամենեւին, որ ծնողաց յատկութիւնը անցնում են իրանց զաւակացը, բայց այդ չէ ցոյց տալիս, որ եթէ ծնողը ուժեղ են, նոցա զաւակներն եւս անշուշտ ուժեղ կը լինին. եթէ խելօք, խելօք. եթէ առաքինի, առաքինի։ Վասն զի աշխարհս մի երկրորդական արդանդ է, որից մարդս հարկադրուած է կրկին ծնանելու, իւր անուան վերայ մի այլ անուն կամ կոչում աւելացնելու։ Ծնողը աշխարհին են տալիս մի էակ, համարներ, ուժեղ, առաքինի եւ խելօք լինելու «ընդունակ» եւ ոչ իսկապէս եւ կատարելապէս խելօք, ուժեղ եւ առաքինի։ Այս վերջին գործը էակի կեանքի վերայ ազդեցութիւն ունեցող հանգամանքների պաշտօնն է։ Ծնողաց որակութիւնը իրել մի սերմ մի հողից ընկնում է մի այլ հող, (այսինքն մի մարմնից մի այլ մարմին), եթէ այս վերջին հողը չունենայ այն բոլոր սննդարար նիւթերը, որոնք եղել են առաջուան հողի մէջ, նա կը ոչնչանայ, չի աճիլ, չի բեղմնաւորիլ։ Ինչպէս նաեւ ծնողը տղէտ, մոլի եւ ունդօր լինելով, այդ մի եւ նոյն յատկութեանց տրամադիր են անում իրենց զաւակին. բայց նա կարող էր չենթարկուիլ այդ յատկութեանցը, եթէ ազատ մնար այն հանգամանքներից, որոնք աճեցնում եւ երեցնում են այդ յատկութիւնը։ Ասել է թէ, ոչ միայն առանց կանոնաւոր դաստիարակութեան (կամ ինքնակրթութեան) մարդս կարող չէ իւր ծնողական բարի յատկութիւնը պտղաբեր կացուցանել իւր մէջ, այլ նաեւ կանոնաւոր դաստիարակութեամբ կարելի է երեխայի ստոր տրամադրութիւնը, որ ստացել է իւր ծնողացմէ ժառանգականապէս, ճնշել անհետացնելու չափ եւ նորա բնութիւնը վսեմ յատկութիւնք բեղմնաւորելու ընդունակ կացուցանել։ Իսկ որ ինչ կը վերաբերի «ծիրք» ասած բանին, որ իւր թէ առանց ուսման եւ վարժողութեան շնորհի է տրվում մարդու ծրիապէս, զորս սուտ եւ ճշմարիտ լինելը կերելի, յաջորդ յօգուածիս մէջ։ Այժմ խօսինք մարմնոյ եւ նորա զարգացման մասին։

Յայտնի է, որ մարմինը մի ինքնաբոյս բան չէ, այլ յառաջ է գալիս սերմից։ Ոչ մի սերմ չկայ, որ աճէ առանց սնունդի։ Ինչպէս որ բոյսի աճելու համար հարկաւոր է հող, ջուր, օդ, լոյս եւ այլն, նոյնպէս եւ մարմնոյ աճելու համար հարկաւոր է կերակուր եւ օդ։ Եւ այդ իսկ պատճառով մարմնոյ յատկութիւնը ըստ արտաքինոյն եւ ըստ ներքինոյն կախում ունի կերակուրի եւ օդի յատկութիւնից։ Ուրիշ անգամ, երբ կը խօսինք սուղօրակա հոգեւոր վերայ, տեղիք կունենանք մանրամասն ցոյց

տալու այդ սննդարար տարերքների որակիւնը եւ որակիսի ազդեցութիւն ունենալը, բայց առ այժմ բււռ է, եթէ հաստատապէս իմացուի, որ մեր մարմինը ոչ այլ ինչ է, բայց միայն այն կերակուրը, որ մենք ուտում, ծծում կամ խմում ենք, եւ այն օդը, որով մենք շունչ ենք առնում։ Այդ երկուսի ընդհանրութիւն պէս, կընդհատուի եւ մեր մարմնոյ աճումը, նորա շարժողութիւնը, կեանքը — մենք կը մեռնինք։ Մարմնոյ ուժը կախում ունի գլխաւորապէս միանունների զարգացումից, ամրութիւնից, իսկ դոցա զարգանալը եւ ամրանալը կախում ունի մարմնամարդութիւնից եւ ֆիզիքական աշխատութիւնից։

Քանի որ աշխարհիս երեսին ոչ ուսումնարան կար եւ ոչ ուսում կամ դիր, այդ ժամանակ մարդոց դաստիարակութիւնը կայացած էր միակ մարմնավարժութեան մէջ։ Գրավարժութիւնը ներս մտնելէն զկնի եւս մարմնավարժութիւնը չընդհատեցաւ հին ազգերի մէջ մինչի քրիստոնէութեան տարածուիլը եւ կռապաշտական սովորութեանց հալածուիլը)։

*) Մարմնավարժական դաստիարակութիւնը ամեն հին ազգաց մէջ առաջին եւ ամենակարեւոր դաստիարակութիւնն էր. վազք, լող, ըմբշամարտութիւն, նետասփութիւն, ձիարշաւ, կառաքշաւ եւ որ եւ իցէ մարդկային ուժը զօրացնելու եւ մարմինը ամրացնելու վարժութիւնը առ հասարակ իշխանազանց կրթութիւնն էր։ Քրիստոնէական ժամանակը այս մարմնավարժական դաստիարակութիւնը մոռացուեցաւ։ Եւրոպայի դարուս սկզբից Եւրոպացիք սկսան գործածել Անգղիոյ, Գաղղիոյ եւ Գերմանիոյ երեւելի դաստիարակախօսաց յորդորմամբ. նախ Անգղիացումը եւ Գերմանիացումը սովորութիւն լինելով, Գաղղիացի անցկացաւ եւ այնչափ կատարելագործեցաւ, որ մասնաւոր կրթարաններ հաստատուեցան, որոնց մէջ հաշմանդամ եւ անդամալոյծ անձիք սկսան բժշկուիլ այս կրթութեամբ, երաժշտութիւնը եւս իրանց շարժութեամբ միջոց աճելով. վերջապէս թէ պատանեկայ եւ թէ աղջկանց վարժարանաց եւ վարժատանց մէջ ընդունելով հաստատուեցաւ այս մարմնավարժութիւնը... Եւրանի կը լինէր, որ մարմնավարժական դաստիարակութիւնը մեր Հայոց աշխարհին որդոց մէջ եւս մտնէր, որում շատ հարկաւորութիւն ունինք ոչ թէ Եւրոպացոց հետեւելով, այլ մեր նախնեաց դաստիարակութեան ամենամեծ առարկան լինելուն համար։ Գլխաւորն Վահագնի վիշապներու հետ կռուելը, Ա. Արշակայ նիդակով կոթողներ ծակելը, Հայկազն Տորքայ ըղունկներով քարեր փորելը եւ Սիւսի ծովին մէջ հաւաքին քարեր նետելով պղնձութիւն անելը, Մեծիւն

Մարտոսյի իրանց քաղաքի չորս կողմով պարիսպ
չէին քաշում թշնամուց ապահով մնալու համար, վա-
խենալով, թէ մի գուցէ այդ հանգամանքը ժողովրդի
ուժն ու բաշտութիւնը նուազեցնէ, այլ աշխատում
էին ի ձեռն մարմնավարժութեան իրանց անձը պատ-
րաստել «վահան ամրութեան, որով կարատեցն դամ-
նայն նետս մուխ թշնամուցն շիջուցանել»:

Որպէս զի մենք առանց ծանօթութեան կարողա-
նայինք օգուտ քաղել այս կենսատու պարապմունքից,
հարկաւոր է աչքի առջև ունենալ յետագայ նկատու-

Տրդատայ երեւելի նահատակութիւնները, Վարազդա-
տայ նետագութիւնը, վաղելը եւ ցաթկելը, հզօր եւ արի
Աշոտ Երկաթին հաստ երկաթեայ դաւաղանը ծռելը,
Հաւուռնի Ասլ խարիպ զօրապետին մի արի հար-
վածով երկաթէ դռնի կտրելը, Ա. Լեւոնի Ռութէն
որդւոյն Բաղանիքի մէջ ջրով լիւր մարմարեայ աւա-
ղանները իր սաստիկ զօրութեամբ վեր վերցնելով
Ջուռայ կայսեր առաջը դնելը եւ այլն: Սրանց նման
հազար ու մէկ օրինակներ, որ մինչեւ մեր օրերն
անգամ տեսնում ենք Հայոց աշխարհիս որդւոց մէջ,
ցոյց են տալիս մեր նախնեաց մարմնավարժական
դաստիարակութիւն ունենալը: (Կուռնկ Հայոց Աշ-
խարհին 1860 ամի երես 167):

Մեզ ոչինչ չէ մնում սորա վերայ բան աւելցնել,
բացի ափսոսալուց, որ այս խօսքերը ահա ինք տա-
րի է որ ասուել են, բայց սոցա կատարման նշանը
ոչ մի տեղ մեր Հայոց Աշխարհին որդւոց մէջ չի երե-
ւում. իսկ եթէ որ մեր դիւցապանց քաջագործութիւնը
առասպելաբանութիւն կը համարէ, թող իմանայ, որ
մարմնավարժութեամբ մարդիկ այնչափ շատ ուժ են
ձեռք բերում, որ քաղաքէ քաղաք թափառելով ցոյց
են տալիս իրենց շնորհքը ոչ ասկալ դնով: Երեսուն
բառասուն փութ բան բարձրացնելը, տասը փութա-
նոց բան մի քանի տասնաւոր քայլնետելը շատ հեշտ
եւ դիւրին բաներ են նոցա համար: Իսկ որ ինչ կը
վերաբերի ծարպիկութեան, արկ վարժողութեանը մէջ
այն աստիճան զարդանում են, որ վարժողութեան
գօրութիւնը չիմացողին աչքակապութիւն է համար-
վում եւ կախարհութիւն եւ չէ կարծում, որ այդ բա-
նը ստուգապէս այդպէս կատարուելիս լինի: Ինչ է
փոխուանիքների (ձեռնածու) զլխաւոր գաղանին, եթէ
ոչ ձեռաց դարմանալի արագաշարժութիւնը, որ այն-
չափ սաստիկ է որ մեր աչքին չէ երեւում, թէ երբ
եւ ինչպէս արաւ: Իսկ մենք մեր տղիտութեամբը
այդպիսիներին աչքակապ ենք համարում, եւ ամենա-
ճշին լսրախաղայի ծարպիկութիւնը ի վերջոտ
իջած մի առանձնաշնորհութիւն:

դութիւնը: Մարդս կարող չէ թաղանի իւր մեջ այն,
ինչ որ այլ եւս չէ թէ ընդունակութիւն կամ տրա-
մագրութիւն է, այլ շօշափելի մի բան է դառած:
Ընդունելը, որոնք սովորաբար ուժով են լինում, նո-
քա միշտ որս են վնասում իրանց ուժին ենթա-
կելու համար: Սորա շատ անգամ բոլորովին աննպա-
տակ ծառերի եւ քարերի հետ են կապում: Կանխա-
կալ կարծիքներից եւ կաշկանդող խաւար նախա-
արաշարմունքներից ու ծռւ. հասկացողութիւններից
ազատուած մի միտք աշխատում է լուծել այնպիսի
խնդիրներ, որ իւր կարողութիւնից շատ բարձր է եւ
եթէ լուծէր էլ, նորան ոչ մի շահ չպիտի լինէր:
Ճարպիկ լարախաղացը մի նոյնքան ոգիւրդում է
իւր պարանի վերայ, որքան ճարտարախօս հռե-
տալը իւր ամբիոնի վերայ, զիւրազանք բանաստեղծը
իւր հերոսների նկարագրելու եւ հանճարաւոր
քննադէտը իւր ենթադրութեանց ճշմարտութիւնը զրո-
նելու եւ ապացուցանելու: Սորանից պէտք է
հետեւցնել, որ ուրեմն եթէ երեսայի սկզբնական
կրթութեան ժամանակից սկսած հետզհետէ զարգա-
ցնենք նորա մարմնոյ ուժը այնքան, որ այդ նորա
մէջ մի շօշափելի բան դառնայ, այնուհետեւ սրբան
կուզէ շատ լինի նորա մտաւոր պարապմունքը, նա
այնու ամենայնիւ իւր սիրելուց չի կամենալ զրկուիլ
բնականապէս. մի բան, որ արդէն պահանջմունք է
դառել եւ ստիպում է կատարում, նորանից շուտ
չի կարելի ազատուիլ, մանաւանդ երբ իմացուի, որ
այդ պահանջման կատարումը շատ պատուական եւ
օգուտաւէտ սովորութիւն է: Բայց մենք բոլորովին սորա
հակառակն ենք անում: Մեր երեսայոց մահու պատ-
ժով արդիւրում ենք խաղալ, կպչել, վազվզել, որ շատ
բնական են երեսայոց վաւժառւնքնութեանը եւ փո-
խանակ օգուտ քաղելու այս բնատուր ձգտողու-
թիւնից եւ կանոնաւորելու նորան, մենք խլում ենք
երեսայի սոս քաղկութիւնը, նուաճում ենք նորա ուժը,
եւ այնուհետեւ առանց մեր ստիպելու էլ նա ինքն է
ստում այդ խաղերը, եւ, իբր խելքի գալով, սկսում է
նկատել, որ խաղալը եւ ֆիզիքական աշխատութիւնը
աղբատ եւ անկիրթ տղայոց գործ է. սկսում է մե-
ծամտուիլ, մի տիրակալն բնաւորութիւն ստանալ,
մինչեւ այն աստիճան, որ իւր ձեռները անգամ էլ չէ
ուզում լուանալ, իւր կօշիկները, շորերը սրբել, փո-
ղոցից մը աղլուխ բան չէ տուն բերում, չորս ֆուտ
բանի համար մշակ է բռնում: . . . Այսպիսի
պատմութիւն ինչի կը նմանին վերջը, եթէ մանաւանդ
ընկնին այնպիսի կլիմայի տակ, որ առաւել եւս
նուաճել նոցա մարմնոյ ուժը: Յայտնի բան է, նորա
կը դառնային կնամարդիք եւ կը նմանէին այն գիւ-

նականին, որ մենք նկարագրեցինք մեր նախընթաց յօդուածումք: Էւ այս Թերութիւնը նոցա շատ աակաւ զգալի կը լինի. վասն զի մի բան, Թէ լաւ Թէ վատ, օր սովորութիւն եւ պահանջմունք է դարձած մարդու բնութեանը, այն է սիրելի իսկ եթէ ոչ, չէ սիրելի: Նոքա զրկվում են այնպիսի բանից, որ չեն սննդեղ բոյց եթէ ունեցած լինէին եւ կորցրած, այդ ժամանակ առաւել կախոսային:

Կասկած չկայ, որ խելքով առաւել լաւ կապրի մարդս, բան Թէ անխելք. բայց կարծել որ խելքով ապրել կը նշանակէ մի միայն խելքին զօռ տալ, բան զրել, բան ասել, եւ այլն. բայց իւր կօշիկները չարքել, իւր ձեռին ջուր չածել, չիմանալ լող, ծիարշաւ, ըմբշամարտութիւն, որսորդութիւն, մի որ եւ իցէ արհեստ եւ այդ բոլորը ծառայից եւ անխելք մարդոց զործ համարել, այդ բոլորովին անխելքութեան եզրակացութիւն է: Խելքը չի որոշում այդ պահանջմունքների համար առանձին խառնձին քատիր, այլ բոլոր մարդոց համար, առանց բացառութեան, բնական է համարում նոցա իսկ բարեկաւութեանը համար. կարգի եւ կանոնի տակ է ձգում այդ պահանջմունքները եւ նոցա կատարելու դիւրին եւ անվնաս կերպն է սորվեցնում: Խելքը չէ ասում, որ մեզ ուտել պէտք չէ, այլ ցոյց է տալիս, Թէ որ կերակուրը աւելի սընընդարար է եւ որք սակաւ, որք օգտաւէտ եւ որք վնասակար, որք հարկաւոր երեխային եւ որք աշխատաւորին, որ կլիմայում ինչ տեսակ կերակուրը աւելի առողջարար է եւ որք ընդհակառակն եւ այլն: Եթէ այս ճշմարտութիւնը ընդունում ենք, դիտենք, որ առանց կերակուրի չենք ապրիլ, մեռածի հաշվում չենք միթէ, երբ զուրկ ենք մեր գլխապահութեան գլխաւոր զէնքից, որ է մեր ուժը. ուժը, որ ամուսնութեան գլխաւոր պայմանն է, զործուէտ. Թեան միակ զործին է, մարդկային ստոր կիրքերը նուաճող միակ սանձն է, աշխարհային փորձանքներից միակ աղատիչն է, այրութեան եւ հերոսական միակ զրոշմն է Ա՛ր երեւելի դիւցազնը եւ տիտղոսով պատուած անձն կարող էք վերցընել, որ առանց ուժեղութեան կարողացած լինի հասնել այդ պատուին, եւ առանց մարմնամարդութեան կարողացած լինի հասնել ուժեղութեան: Մեծն Աղէքսանդր, մեծն Փրիդրիկոս (Ֆրիդրիխ), մեծն Նապօլեօն, մեծն Պետրոս եւ այլ շատ մեծանձինք ինչով են կարողացել հասնել այս պատուին եւ անմահութեանը, եթէ ոչ իրանց ուժեղութեան շնորհրդք, որ սերտ կապակից է եղել նոցա մեծահոգութեան եւ հանճարոյ հետ: Ի՛նչն էր սքիպում Ռուսաց մեծ կայսրին Հովանդիայումը իւր օրական հա-

ցը հայժհայժել այն խորհրդով, որ առաւել ճշդիւ կտրողանար իւր նպատակին հասնել, այսինքն լաւ սովորել նաւաշինութեան արհեստը: Իրո՛ւ է, վրեժ-խնայութիւնը, նախանձը, պատուասիրութիւնը, ինչպէս նաեւ հայրենասիրութիւնը, աղքատսիրութիւնը եւ այլ այսպիսի վսեմ եւ ստոր կիրքերը երբեմն զորդում են մարդու մեծամեծ գործեր կատարել, սակայն այդ կիրքերը փորքողի եւ Թոյլ անհանց երբեք չեն հասցնում իրանց նպատակին, այլ ընդհակառակն նոցա անուան ստորացնելու եւս պատճառ են լինում: Ուստի, աշխատել երեխայի մէջ վառել հայրենասիրական եւ ազգասիրական զգացմունք եւ ուշ չբարձնել նորա ուժի վերայ, այդպէսով նորանից կարելի է պատրաստել մի ցանցաւ եւ Թեթեւամիտ արարած, բայց ոչ երբեք քաջազործութեանց ընդունակ մի հերոս, ոչ երբեք աւանդ եւ ուսուցանող:

Եթէ մէկը նախապատրաստուած է լինել եւ վարժապետ եւ երկրագործ, եւ արհեստաւոր եւ վաճառական, եւ վարժապետ, եւ բանասէր, եւ զինուորական, եւ մշակ, Թող այս վերջին պաշտօնը լինի կտարելիս, դա այդու ամենայնիւ չէ ծառայել ստրուկ, այլ այն սլարոնն է ստրուկը, որ բացի մի պաշտօնից եւ այն շատ միակողմանի, ուրիշ գործ չի կարող կատարել: Այդպիսին կամայ ակամայ պիտի կապուի կաշկանդուի մի դրութեան մէջ եւ տանել հազար ու մէկ անպատուութեան: Այդպիսիք պիտի սպասեն Թէ երբ պիտի հասարակութեան մէջ բացուի այս ինչ պաշտօնը եւ մինչեւ դրա բացուիլը պիտի Թափառին փողոցէ փողոց: Այս ծրուան օրս մեր վարժապետաց եւ քահանայից միծ մասը այսպիսի անձինքներից են. վա՛յ այն վարժապետին, որ լինը Թերազարդ լինելով, կարծում է Թէ ուրիշներին կարող կը լինի կատարելապէս զարգացնելու: Վա՛յ այն հոգաբարձուին, որ կարծում է Թէ մարդասիրութիւն է այդպիսի մարդոց վարժապետական պաշտօն տալը: Մասնաւորի կեանքի ապահովութեանը զոհել մի ամբողջ սերնդի բազմաւորութիւնը եւ կեանքը, — սարսափելի մոլորութիւն է: Վա՛յ այն ժողովրդոցը, որոնք հողեւորական են շինում մի մարդու, նորա խելջութեանը վերայ միայն ուշ դարձնելով եւ ճարահատութեանը: Ա՛յլ կարէ պախարակել մի բան, որ բարեսրտութիւն է: Բայց միթէ բարեսրտութիւն չի լինիլ, եթէ իւրաքանչիւր զիւղում եւ քաղաքում մի մի սեղանատուն բացուէին մարդոց ծրիապէս կերակրելու նպատակով. բայց ինչ չոր բան կարող էր աւելի չար հետեւանք ունենալ, բան Թէ այս բարի ձեռնարկութիւնը:

Այս հանգամանքը արդէն ինքն ըստ ինքեան մա-

նացոյց է լինում, որ իւրաքանչիւր դպրոցին կից պէտք է լինի եւ մի արհեստանոց: Եթէ աղջկանց դաստիարակութեան մէջ մեռագործութիւնը անհրաժեշտ հարկաւոր է համարվում, որքան առաւել հարկաւոր պիտի համարուի տղայաց մի որ եւ իցէ արհեստ իմանալը. Եւ այս ոչ միայն տնտեսական եւ մարմնամարզական կէտից նայելով մեծ օգտաւետութիւն ունի, այլ նաեւ մտաւոր եւ հոգեկան զարգացման մեծ օգնութիւն եւ դիւրութիւն է տալիս, վստօ զի մարդս մի միայն մտածելու չէ ընդունակ, այլ նաեւ երեւակայելու եւ գործելու: Գործելը մի միայն գրելը չէ, եւ կարգալը, որ մտածելու հետ սերտ եւ անբաժան կապակցութիւն ունին, այլ այնպիսի գործ, որ հանգստութիւն է տալիս այդ զբաղմունքներին եւ ժամանակ է տալիս նոյա շունչ քաշելու եւ զօրանալու: Արհեստները կարող են շատ հասարակներից լինել, ինչպէս են կօշկակարութիւնը (ի հարկէ աւելի կատարելագործեալ մեռով), դիւժակութիւն, հիւսնութիւն, երկամագործութիւն, կազմարարութիւն եւ այլ այսպիսիք: Մենք մեր դաստիարակութեան կերպը մեր ազգի վիճակին պիտի յարմարացնենք. ինչ հարկաւորութիւն կայ կուրօրեն հետիւժել օտար ազգաց: Ո՞ր բանիմաց մարդը չի կարող նախագուշակել, որ եթէ մեր դպրոցների ընթացքը այսպէս յառաջ երթայ ինչպէս այժմ, մեր մէջ կը շատանայ հետզհետէ ծրիապէս լաւ ուտել եւ լաւ հագնուիլ սիրողներու թիւը. եւ մենք ազգօգուտ անդամների տեղ կստանանք դատարկաշրջիկ եւ դատարկաբան անձինք: Թող ոչ որ միակողմանի չմեկնէ մեր այս ակնարկութիւնը եւ զայնակղի, այլ խոստովանի թէ ճշմարիտ է, որ մեր մէջ այսօրուան օրս անգամ շատացել են արդէն այնպիսի պատանիք, որոնք ըստ երեւութին ուսողւմն ածարաւ են, բայց իսկապէս ծոյլ, անզօր եւ ապրելու հնշտ ճանապարհ փնտրող անձինք: Մեր նախնիք իրանց աննշան ուսումովը մեծամեծ հարստութիւններ էին դիզում. բայց մենք այժմ պատրաստում ենք այնպիսի անձինք, որոնք վատնելու առաւել ընդունակ են, քան թէ շահելու իրանց հայրական ժառանգութիւնը: Պէտք է երեւակայել, որ ծխական դպրոցի պատրաստական դաստանից մինչեւ համալսարանի չորրորդ եւ հինգերորդ կուրսը մի այնպիսի ժամանակամիջոց է, որ պարունակում է իւր մէջ միջին թուով քսան տարի, իսկ քսան տարուայ ծախքը անում է շատ սակաւից տասը հազար մանէթ: Հարկաւոր է այս բոլորը աչքի առջեւ ունենալ եւ մեր զաւակներ-

ըին նախապատրաստել այնպէս, որ կարողանան առանց յոգնելու, առանց մեծամեծ կորստի, այնքան քան մեռք բերել, որ կարողանան նսրանից ազդիլ էլ մասն հանել. իսկ միակ մի դուխ ապահովեցնելու նպատակով քառասուն տարուան հասցնել իւր կրթութեան շրջանը, այդ մի սարսափելի մոլորութիւն է:

(Շարունակելի)

Ղ. ԱՂ.

ՈՐԳԻՒՐՆ

ԱՌ. ՄԱՅՐՆ ԱՅՐԻ

Մի անյոյս ո՛հ, մայր, երբէք վըհատիր,
Մի քոյդ դառն օրեր, անվերջ համարիր.
Այն երկինք հաշտ, արդ մեզ կակնարկեն,
Աստուծոյ գութը եւ սէր կաւետեն:

Փութան անձկալի մեր մայր սիրական,
Հետեւիր որդւոցդ լուսաւորութեան.

Քոյդ միակ նըպատակ, զխաւոր ջանք, ճիգ,
Մըտաց զարգացման թող հոգան կարիք:

Քաղցրիկ գիտութիւնք զանազան ուսմանց
Ժամանակի պէտք, փառք են պարծանաց.

Ուր սոցին ճաշակ ոչ տայ ակործակ,
Անդ ոսոխին ճանկը կանգնեն յաղթանակ:

Ապա յորդոր տուր մեզ, Մայր սիրական.
Թո՛ղ փութալ տաճար չքնաղ կրթութեան . . .
Քաղիւ ընտանի, կարեւոր սերմեր,
Ապագային տալ արդիւնք բազմաբեր:

Գիտացիր, յայնժամ, սէր մեր Մայր այրի,
Փոխանակ սըղայ, վըշտացդ բազմազգի
Յաջորդեն աւուրք, աւուրք երջանիկ,
Պերճ փառօր յաւէտ, եւ յոյժ բերկրալիք:

ԱՅՐԻ ՄԱՅՐՆ ԱՌ. ՈՐԳԻՒՐՆ:

Ձեզ եւ եթ իմ յոյս վերջին ապաստան,
Որդիք անձկալիք, սրտիս ըստփանք.
Ձեզ սէրերս ուղղած, խանդակաթ մընամ,
Օ՛ն, յեռանդ, կայտառ, Տէր ընդ մեզ. կարգաւ:
Փութացէք հապա, տաճար գիտութեանց,
Անձանձորայթ ճըզով, լոյս տալ Ձեր մըտաց.
Ձի դուք բաղձալի ուսմամբք զարգացած,
Ձեօք առնու ոգի, մեր Մայր այրիացած:

Ս.

Նախընթաց համարի 18 երեսի երկրորդ էջումը փոխանակ „արեւելեան“ սխալմամբ „արեւմեան“, ե դրուած:

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԷԶՄԵԱՅՆԻ

ՀՐԱՄԱՆԱԻ ՎԵՀՄՈՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ